

մաթիւ արևներ կը նշմարենք աստ և անդ,
աւելի մեծզի և աւելի ճոխ զբութեամբ
քան մերը, և հռուսն նոր ոսկերեւնոներ,
նոր ակունցներ: Ասկայն լոյսը թոյլ չը-
տար կանգ առնելու, կը մղուինք առաջ
ինչպէս Եփրատայ ալիք կը մղեն զա-
լիս: Տարիներ են որ կը սաշին և տաս-
նեակ տարիներ անցան. կ'անցնինք նոր
նոր վիթսարի շարժուն մարմոց բովէն,
և միշտ հեռուն նոր լուսաւոր անթիւ
անհամար կէտեր կը նշարենք, և միշտ
կը պատահինք նոր երկիրներու, նոր աշ-
խարհներու, նոր արևներու, նոր միգա-
մածներու, վերջապէս նոր տիեզերներու:
Միգամածի դրութեան մէջ կը մղուինք,
և ինչպէս Պատուէ կը գոչէ՝ յառաջ յա-
ռաջ, կը յառաջներ հարիւրաւոր տա-
րիներ, կ'անցնին հազարաւորներ, միշտ
խորը զիորոր կարդան, այն է անզոնդէ միւս
անդուն կը մղուինք, և միշտ հեռուն յաս-
պիւներ, սարդիոններ, ոսկերարեր, տպաւ-
զիոններ, և յակինթներ, և տակաւին տիե-
զերաց սահմանազլիւն հեռու ենք: Հարկ
է կտրել անցնիլ բիւրաւոր տարիներ և
դարեր, և միշտ պիտի պատահինք միգա-
մածներու մէջ ուրիշ միգամածներ, նոր
տիեզերներ, նոր անյատակ վիճեր, մին-
քան զմիւն աւելի մեծ աւելի խոր. միշտ
դէպի յառաջ կը վազենք նոյն լուսուր արա-
գութեամբ միիրնաւոր դարեր, և եթէ հար-
ցնենք թէ ուր հասեր ենք, ուր ենք, տիե-
զերաց մէջ որչափ տեղ կտրեր ենք, մեր
միտքը պիտի պատասխանէ թէ մի բայլա-
փոխ հազիւրած ենք, տիեզերաց կերոննէն
դուրս ելած չենք, և որչափ երթանք ա-
մէն տեղ կերոն է և ոչ մի տեղ կը գլու-
նուի շրջապատ:

Եթէ ստեղծուածն՝ այսպէս անչափ է,
հապա ո՞վ կարէ Անստեղծին մեծութեանը
հասու ըլլալ:

Հ. ԽՈՐԵՆ. Ս.

ԳԱՆԱԿԱՆԱԳԱՎԱՐԵՏԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐՐՈՅՑ ԴՐԱԳԱՆՈՑԻ

ԱՆԴՐԱԾՆԻԿ ԴԻՊԼՈՄՆ

ՀԱՌԱՄԵՑ ՄԵՋ ԿՐ ԳՐԻՑ ԳԵՏԱԿԱՐ.

Ներկայ տարւոյս Յունուարի 14-ին
ընտիր բազմութիւն մը եկեղեցականաց՝
հրաւիրուած Քահանայապետական Հաս-
տատութեան Արքացան Երգեցողութեան
Դպրանոցի Տեսչութենէն՝ կը հաւացուէր
ներկայ լինելու ընթացաւոր աշակերտաց
Դիպլոմներու բաշխումին, Բնենեղիկոսու ԺԵ
Արքացան Քահանայապետէն Հնորհուած
նոր պալատի գեղարուեստական զանձին
մէջ:

Հրաւիրեալ Եպիսկոպոսունք, Քորեպիս-
կոպոտունք, քահանայ ուսուցչապետը և
զղերիկոսը յամենայն ազգաց լցին բազ-
մականները: Խսկ Դպրանոցի Տեսչութիւնն
ուսուցչական խմբովն աշակերտաց հետ յա-
տուկ տախտի վրայ բոլորել էին շրեղ
Երգեհոնը, որնն սկիզբն տուին հանդիսին
բազմաձայն (poliphonie) խմբական եր-
գով, Ա. Ցովհաննէս Լատերանեան Քահա-
նայապետական ԱՄԱՐ Եկեղեցույ կապել-
լայի Ամէստրո Դոն կազիմիր ուսուցչա-
պետի գեկավարութեամբ, որ ողջունուե-
ցաւ բուռն ծափահարութեամբ:

Զկնի այնորիկ Բնենեղիկոտեան Արքայ
Ֆէրբէտտի խօսեցաւ աւուր պատշաճի ճա-
ռը, ակնարկելով Դպրանոցի սկզբնաւորու-
թեանը և աւելի ճոխանալով եկեղեցական
երգոց ոճի, ոգույ և նպատակի նկատ-
մամբ, յորդորելով զաշակերտաներն եռան-
գեամբ ուսանելու իրենց վերաբերեալ յա-
տուկ ուսումն, զգուշանալով չտալու եկե-
ղեցական երգոց՝ աշխարհիկ ոճ, ողի և
ճաշակ, ի վերջոյ յայտնելով խորին ե-
րախտագիտական զգացմունքներ առ եր-
ջանկայիշատակ հիմազիքը Ա. Քահանա-
յապետն Պիոս Փ. որ հասդիմացաւ իս-
կապէս Ամեկնաս Եկեղեցական Երգեցո-
ղութեան վերածնութեան, և շեշտեց ա-
ռանձին կերպով՝ թէ մեծ է Արքացան Հօր
արդիւնքն, զի Ավելորդ Դարէն, այսինքն

Գրիգոր Մեծին սկսած ոչ որ անոր յա-
ջորդներէն այսչափ մոտածեր և հոգացեր
էր արդի շայլ և օտար ազդեցութեամբ
ծանրաբեռնուած երգեցղութիւնը վերա-
ծել իւր նախկին պարզութեան՝ զերա-
զանցապէս կրօնական զգացմունքներով
տոգորելով, որ կը շարժէ հոգեսր ջեր-
մեռանդութիւն և սուրբ խանդ մը աս-
տուածպաշտութեան։

Եւ իրաւունք ունէին թէ՝ Պիոս Ժ. Քա-
հանայապետն և թէ թննեղիկտեան Ար-
քայն, քանզի լատին եկեղեցեաց մէջ, մա-
նաւանդ Հովովի հրաշակերո թաղիլիկայի
կապէլլայի Մաէստրօներն արտաքին փա-
ռաւորութեամբ գողցես շլացած, իրենց
յօրինած երգերուն ալ տուած էին նոյն-
քան շըբդութիւն, և թէ ներելի է ասել՝
թատրօնական հմայք, ոգի և թոփչք, թն-
կրնդրաց գոհութիւնն յայտնի եղաւ ոգե-
ւորած ծափանարութենէն։

Ապա խօսից թելն առաւ Դպրանոցի
Տեսուչ և Արք. Երաժշտութեան Ընկերու-
թեան խուալական խմբի Ընդհ. Նախազահ
Թիսուսեան Հայրն Դէ Ավանդի, համառօտ՝
բայց որոշ կերպով նկարագրեց, սկսած
Դպրանոցի առաջին տարւոյ համեստ վի-
ճակէն՝ մինչև ներկայ ամի հանդիսաւոր
համախմբութիւնն, որքան ճիգ և ջանց
թափել են վաստկելու Արքազան Հօր
ուշագրութիւնն և համակրութիւնն, ու
հասուցել էին բաղձացած բարձրութեան
դնելով զայն, այն բարոյական և ուսում-
նական շրջանակի մէջ՝ որով արժանացել
էին ընդունելու Արքազան Հօր յատուկ
կոնդակով Քահանայապետական Հաստա-
տութեանը համար արտօնութիւն և իրա-
ւունք, Ակադեմական դիպլոմներ տալու
ընթացաւարտ աշակերտաց։

Արքան ի կմնդանութեան Պիոս Ժ. Ա.
Պապ կը հոգար և խնամարկէր իւրային
Հաստատութիւնն, նոյնքան երկիւղ պա-
տեց զմեզ — ասաց — երբ անժամանակ
մահուամբ, պահ մը որրութեան մասնուելու
տագնապն առաւ զմեզ, սակայն երբ ար-
ժանի եղանք ներկայանալու Նորդնոտիք
Ա. Քահանայապետին թննեղիկտոսի Ժէվ

և բացատրեցինք Դպրանոցին ներկայ կա-
ցութիւնն՝ վիճակն և յառաջադիմութիւնը,
ի մեծ մխիթարութիւն և յուրախութիւն
սրտի հանդիպացանը նոյն հայրական զգաց-
մունքներուն և բաջալերական խօսքերուն,
յառաջ վարելու իւր սրբակրօն Նախորդի
գործն, խոստանալով իւր բարձր հովա-
նաւորութիւնը տարածել վահանայապե-
տական Դպրանոցիս վերայ. և իր ի նշան
իւր մտօրիմ զթոյն՝ կամեցաւ ինքնին տես-
նել պատրաստուած դիպլոմները, ընդ որս
հաճեցաւ և Քահանայապետական կոնդա-
կով հաստատեց. Ռւստի Հայր Ցեսուչն
ուրախութեամբ յարեց՝ թէ այս առաջին
անգամն է՝ որ կը ժողովինք այս դահճին
մէջ, և առաջին նուագն է որ Դպրանո-
ցիս ընթացաւարտ աշակերտը պիտի ըն-
դունին իրենց անդրանիկ դիպլոմը Քահա-
նայապետական զգացմանոցին զրոշմակըն-
քով։ Դպրուցանելով խօսքն առ սատա-
րիչս Դպրանոցին և առ Ռւսուցչական մար-
մինն, ասաց, նախանձելի և ամենայն
գովեստից և շնորհակալութեանց արժանի
է անշահասէր աշակցութիւնն, որոց ժիր
և յարատև ջանցերու շնորհիւ՝ մաքառե-
լով նիւթականէն աւելի, հեզնող և չա-
րագուշակ հակառակորդներու դէմ, որոնց
Դպրանոցիս խանգարման և եղծման վե-
րահաս պատահարով՝ կը յուսային իրա-
ւունք ունենալ և արդարանալ. բայց չե-
ղաւ ուզանին, և մեր Հաստատութիւնն
կը թևակրիս այսօր իւր փառաւոր նոր
շրջանը։

Զէնի բանախօսութեանս, որ բուռն
կիրապով ծափահարուեցաւ, Հայր Դէ Ավանդի
մատեաւ մրցանակներու բաշխումին։

Աշակերտական խումբն կը կազմուէր
ամեն ազգէ և լեզուէ, որոց մէջ կար և
մի Հայ։

Հայ երիտասարդութիւնն երբեմն կ'ըն-

1. Կ'ակնարէտ 1914 Նոյ. 23ի նախորդ Արքածա-
նոցին մէջ առել ունեցած արկածը՝ կազի պայթման հե-
տամասօթ, ինչ որ նկարագրեցին նոյն տաեն Հոռվիմայ ո-
րաթերթերը։

թանար յլլթէնց, յլլղեցսանզրիա, ի թիւ-
զանդիոն՝ ստորյօ յօգանալ զիտութեանց ճե-
մարաններուն. այսօր փոխուած են այդ
անուններն ի վենետիկ, Պարիզ, Հռովմ և
Գիբրմանիա, կամ որ նոյն է ասել՝ համօրէն
Եւրոպայի ուսմանց կերրոնները։ Հայն յար-
գուած մրցակից եղած է հին և նոր աշխարհի
ամենազարգացած ազգերու ուսանողաց. և
այդ ընդունակութեան շնորհիւ միշտ բարձր
պահելով իւր ուսման մակարդակն հարե-
ւան և տիրող ազգերու վրայ, կարողացել
է պահել և պահպանել իւր գյութիւնն
տարերային բնութեանց և աւերածոց մէջ,
և լինել ի համարի կենցանի ազգերու։

Հետեւել նմանիլ և իւրացնել ոստարի
գիտութիւնն և արուեստն, հետի՛ ի նուաս-
տութենէ, առաւել պատուաքեր պէտք է
համարել, որով տարօրինակ չպիտի թուի
եթէ այսօր տեսնենց նաև մի Միխթա-
րեան Վարդապէտ Քահանայապէտական
Դիպրանոցի նստարաններու վրայ բազմած,
և զինցն նուիրած Դիրիգորեան երգոց և
երգեցողութեան արուեստն սովորելու։ Թե-
րեւս սակայն մէկն հարցանէ, ի՞նչ օգուտ
կարէ բերել մեր արեւելեան եղանակնե-
րուն՝ որք աւանդաբար Շարակնոցի միջո-
ցով հասած են մեզ։

Այս հարցին թողում մեր եղայրակ-
ցին՝ պատասխաներու ժամանակին տեսա-
կանապէս և զործնականապէս՝ համեմա-
տական ուսումնամատութեամբ։ կանխեմ
ասել որ կարծուածէն աւելի օգտարեր
կարէ լինել մեր եկեղեցական երգեցողու-
թեան կանոնաւոր և հաստատուն կանոններ
սահմանելու մասին, որով պիտի ազատուի
տիրացուներու քմահանոյ բաշբառէներուց։
Այս աշխատութեան մէջ պիտի երեկի ժայ-
նագրողի հմտութիւնն և ճարտարութիւնն,
որ բանաւոր կապանցներու զարկած ժա-
մանակ՝ կարենայ պահել արեւելեան երգոց
հոգերանութիւնը, որ զուտ կրօնական և
զգացողական (sentimental) նկարագիր
ունի, որով սրտաշարժ և բարեպաշտա-
կան, մելամաղձիկ և միխթարական։ Այս
պիտի բնոյթ ունին Դիրիգորեան եղանակ-
ներն։

Սուրբ Քահանայապէտը հմուտ ե-
ղած է արևելեան երգերու այն ժամա-
նակ՝ երբ կ. Պոլսի արքունեաց մօտ պա-
տուիրակութեամբ զնացած էր քաղաքա-
կան գործերու համար, ուր ի միջի այլոց
շէր վրիպած իւր սրամտութենէն նաև վ.
Այսակ Պարթէնի առ Պրոկտ հայրապէտ
գրած թղթի ընթերցումն, զոր ի վկայու-
թին կը բերէ ի հերքումն մոլորութեան
Երից Գիլուց։ Այսի ուսումնասիրողը Գրի-
գորեան Երգոց, կը խոստովանին այն մեծ
աղերսն զոր ունին սորա յունական կամ
արեւելեան ընտիր եղանակներու հետ։ Նոյ-
նը հաստատեց նաև Հ. Ղեռնդ Ցայխան
իւր երեքաման դասընթացի ժամանակ,
նկավ առնելով մեր շարականներու և տա-
ղերու եղանակներէն ոմանք, երկու ան-
գամ Եւրոպացից ուսումնասիրաց ակմբում
Համերգ տալով, և համեմատութեան զնե-
լով երկու երգեցողութիւններն՝ ըստ արե-
ւելեան կերպի երգելով, մեծապէս զար-
մացուցեր էր զունինդիրներն, որնց եթէ
տեսականապէս ունին փոքր ինչ գաղա-
փար մեր շարականներու եղանակի մա-
սին, սակայն ըոլորովին նոր ոպաւորու-
թին թողեր էր՝ ձայնական երգն՝ մինչեւ
ցայն վայր իսպատ անլուր մնացած եւրո-
պական ականջաց, կամիմ ասել Հռովմի
Արրազան երգոց պարապող ուսանողաց և
ուսուցչաց։

Աշխատութենէ վերջ քաղցր է հան-
գիստն, մրցութենէն վերջ՝ սրտատրոփ
վարձատրութիւն կ՝ ակնկալուի. նոյնն
նաև կը զգայ ամեն մէկն յասպարիզի ու-
սումնական մրցութեանց. և մենց այդ օրն
ժողոված էինց հանդիսատես լինելու երի-
տասարդ վարդապետներու յաղթանակի
պսակին և ծափակարելու։ Այդ ցանկալի
օրն հասած էր Միխթարեան Վարդապե-
տին ալ, որ իւր ընկերաց խմբի հետ հան-
դիսապէս կ'ընդունէր Երաժշտական ընկե-
րութեան պատուակալ Ընդհ. Նախագահ
Բնենդիկտեան Տօմ Ամելլի Աբբային
ձեռքէն՝ Քահանայապէտական Դիպրանոցի
անդրանիկ դիպլոմն, կը մաղթենց իւրեն
ի սրտէ լիուլի յաջողութիւն, որ նորանոր

դափնիներով կարենայ, ինչպէս իրեն ա-
սել էին համերզի ժամանակ, հայ երե-
ցողութեան համար լինել նոր ոմն Գուի-
տո Տ'Արէցոյ, որ Հռովմէական եկեղեցւոյ
երգեցողութեան հիմանդիր և կանոնաւո-
րողն համարուած է իրաւամբ:

X.

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՉԱԳԱՆԳ

Ասկան Էֆ. Մարտիկեան

Թուրքիոյ գժբարդութեանց ամենէն կա-
րեր պատճառներէն մէկն եղած է աղաղա-
կող պակասը իրական մարդոց, որոնք իրենց
մէջ միացուցած ըլլային սկզբունքի, կարո-
ղութեան, և անկեղծութեան յատկութիւն-
ները:

Ամբողջ այդ երկրին մէջ շատ գժուար է,
եթէ ոչ անկարելի, այս երեք յատկութիւն-
ներիվ օժտուած քանի մը մահետականներ
գտնել, որոնց ի հարգին կրնար վասահաւիլ:

Աչա այդ խակ պատճառին համար է, որ
երբ Թուրքիոյ Փրիստոնեայ ժողովուրդներէն
կարող անձ մը կարեռը նախարարական պաշ-
տօնի մը կոչուի, ու երբ այդ պաշտօնեան
իրական ծառայութիւններ մատուցան՝ բա-
րենորդումներ մտցնելով իներկայացուցած
նախարարութեան մէջ, հրաց մը կր նկատ-
ուի, ըլլայ բնիկ Թուրքիացիին, ըլլայ Թուր-
քիան ճանշող օտարականի մը կարմանէ:

Այդ ասուակի նման ցորացող բարենոր-
դումներէն մէ կը գործադրուեամ 1913-14ին,
Թուրքիոյ թղթատարական - չեռագրական
վարչութեան մէջ, չնորչէւ Հայ զաւառա-
ցիի մը:

Ասկան Էֆ. Մարտիկեան, գրեթէ 45 տա-
րեկան անձ մը, ասկէ մօտաւրագիս 10 տա-
րի առաջ կը պաշտօնավարէր Ոսմ. Հանրա-
յին Պարտուց վարչութեան մէջ, և կը նկա-
տուէր անոր կարողագոյն պաշտօննեաններէն
մէ կը: Այդ միջոցին Եւեմտական Կախարա-
րութիւնը կարող պաշտօնեայի մը սովուն
րանուած, զիմեց առաջնոյն ինսդրեալ Թուր-
քիէն գիտաց կարող և վասահէի պաշտօ-
նայ մը: Աչա թէ ինչպէս Ասկան Էֆ. Հանրի
նշանակաւեցաւ այդ պաշտօնին: Անու հետեւ,
իրոք քննիչ նայն նախարարութեան, Թուր-

քիոյ շորս կողմէիր պատեցաւ և գնահատելի
ծառայութիւն մատոյց:

Ասկէ գրեթէ երեք տարի առաջ, երբ Ե-
րիտասարդ Թուրքիրը ուղեցին, իրը չնորչ
չայց, Հայ նախարար մը կարգի Կահէնի-
նին մէջ, իրենց ամենն անկարեւոր նկատած
նախարարութիւնը, Թղթատարական և Հե-
ռազմական, յանձննեցին Հայու մը, Ասկան
Էֆ. Մարտիկեանի: Ասկան որ Տաճկական
փորան նկատած լին կէս մը պարախ-խանէ
և կէս մը բացիկն նուաս միսան իրենց աշքը
բանալ, և Հետզետէ նկատել զայն եւրոպա-
կան նայնօրինակ հաստատութիւն մը:

Հակայական գործ մըն էր, զոր Ասկան Էֆ.
Կատարեց կարճ ժամանակի մէջ, անանկ որ
նոյն խակ Եւրոպական վաճառականներ
Տուններ սկասան թրական փոսթին յանձննել
իրենց օտար երկիր զրկած նամակները և
ծրաբները: Հայ նախարարը, իրը գործի
մարդ, նախ և առաջ սկսած մրցի Թուրք-
իոյ, նա մոնաւանդ մայրաքաղաքին մէջ
հաստատուած Եւրոպական թղթատարա-
տուններու հետ:

Ասկան Էֆ. Հանճարեղ գաղափարը յղա-
ցաւ թղթական թղթադրոշմը երկու դաստ-
կարգի բանենէ՝ արտասահմանի նամակնե-
րուն համար յատկացուածներու վրայ կար-
միր ասաց յր աւելցներով:

Ասիկա բնիկին վերջ, կարմիր ասատ մը
կրող թղթադրոշմերը մեծաբանակ վաճառ-
ման գրաւ, իւրաքանչիւրը 40 փարայէն քիչ
մը պակաս գնով: Եւրոպական փօսթ օֆիս-
ները չին կրնար իրենց թղթադրոշմերուն
զինը ու և է կերպով զեղչել, ու այսպէս Աս-
կան Էֆ. յանջեցաւ մրցի անոնց հետ, ո-
րովհետեւ արտասահման նամակ դրկաց բոլոր
անձինք, Եւրոպացի թէ Թուրքիացի սկսան
կարմիր ասատ կրող թղթադրոշմը գործածել:

Դարձեալ, Ասկան Էֆ. սկսաւ պաշտօնէ-
ութիւնները մաքրագործել: Ասիկա ջանաց
թղթատարական պաշտօննեաններու մտքին վր-
րայ տպաւորել, թէ իրենք ժողովուրդին ծա-
ռաներն էին, և ոչ թէ տէրերը: Ոչկ քանի
պաշտօննեաններ դուրս բրաւ գործէն, և ոչ ոք
պաշտօնի շարպեց՝ տպանց անոր կարողու-
թիւնը սառագել:

Թղթատարական - Հեռագրական վարչու-
թիւն մթնոլորտը բոլորավին փախուեցաւ,
երբ անոր պաշտօննեանները բարոնեցին, թէ
իրենց գործ պահերու անհրաժեշտ պահանջը
բարեկամական կամ քաղաքական ազդեցու-
թիւն և խարր չիր, այլ անձնական արժեա-
նիք, բնդունակութիւն, և հաւատարմութիւն:

Աչա, այսպէս, Հայ նախարարին մտղնի-
սկամ գտապանին ասկ, Թուրքիոյ ծանօթ